ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.11-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 1-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հաղթող է ճանաչվել **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ն:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ն:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար՝

- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ-ի** հետ՝ **166.600.000** (հարյուր վաթսունվեց միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____